

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը**

1985 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 15-ԻՆ ՍՏՐԱՍԲՈՒՐԳՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝  
ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԽԱՐՏԻԱՑԻ (ԿԻՑ ՀԱՅՏԱ-  
ՐԱՐՈՒԹՅԱՍԲ) 5-ՐԴ, 6-ՐԴ ՀՈԴՎԱԾՆԵՐՈՒՄ, 7-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ԵՎ 10-ՐԴ  
ՀՈԴՎԱԾԻ 3-ՐԴ ԿԵՏԵՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱ-  
ՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

29 սեպտեմբերի 2015թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով.  
Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի,  
Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի (զեկուցող), Հ. Նազարյանի,  
Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկա-  
յացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտա-  
կարգ իրավիճակների նախարարի առաջին տեղակալ Վ. Տերտերյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ  
հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական  
դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72-րդ  
հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «1985 թվականի  
հոկտեմբերի 15-ին Ստրասբուրգում ստորագրված՝ Տեղական ինքնակառավարման  
եվրոպական խարտիայի (կից հայտարարությամբ) 5-րդ, 6-րդ հոդվածներում, 7-րդ

հողվածի 2-րդ և 10-րդ հողվածի 3-րդ կետերում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի՝ 22 հուլիսի 2015թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումը:

Ուսումնասիրելով դիմումը, գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով 1985 թվականի հոկտեմբերի 15-ին Ստրասբուրգում ստորագրված՝ Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի (կից հայտարարությամբ) 5-րդ, 6-րդ հողվածները, 7-րդ հողվածի 2-րդ և 10-րդ հողվածի 3-րդ կետերը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց** .

Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիան ստորագրվել է 1985 թվականի հոկտեմբերի 15-ին:

Խարտիայի նպատակն է Եվրոպայի խորհրդի անդամ պետություններում երաշխավորել ժողովրդավարական ճանապարհով որոշումներ կայացնելու լիազորություն ունեցող տեղական ինքնակառավարման մարմինների առկայությունը:

Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիան Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է 2001թ. դեկտեմբերի 4-ին՝ վերապահումներ կատարելով մի շարք հողվածների, այդ թվում սույն գործով քննության առարկա հողվածների վերաբերյալ:

Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի 12-րդ հողվածի 1-ին մասը նախատեսում է հատուկ դրույթ, համաձայն որի՝ յուրաքանչյուր կողմ պարտավորվում է հետևել Խարտիայի առաջին մասի առնվազն 20 կետերի, որոնց թվում առնվազն տասը պետք է ընտրված լինեն հետևյալ կետերից. - հողված 2 - հողված 3, 1-ին և 2-րդ կետեր - հողված 4, 1-ին, 2-րդ և 4-րդ կետեր - հողված 5 - հողված 7, կետ 1 - հողված 8, կետ 2 - հողված 9, 1-ին, 2-րդ և 3-րդ կետեր - հողված 10, կետ 1 - հողված 11:

Խարտիայի 5-րդ, 6-րդ հոդվածներով, 7-րդ հոդվածի 2-րդ և 10-րդ հոդվածի 3-րդ կետերով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

- չկատարել տեղական ինքնակառավարման մարմինների տարածքային սահմանազատումների ցանկացած փոփոխություն՝ առանց նախապես խորհրդակցելու տեղական շահագրգիռ համայնքների հետ, հնարավորության դեպքում, նաև հանրաքվե անցկացնելու միջոցով (եթե թույլատրված է օրենքով) (հոդված 5),

- ապահովել, որ տեղական ինքնակառավարման մարմինները, չխախտելով առավել ընդհանուր օրենսդրական դրույթները, կարողանան որոշել իրենց ներքին վարչական կառուցվածքները՝ դրանք տեղական պահանջներին հարմարեցնելու և արդյունավետ կառավարում երաշխավորելու համար (հոդված 6, կետ 1),

- ապահովել, որ տեղական ինքնակառավարման մարմինների ծառայողների աշխատանքային պայմանները հնարավորություն տան հավաքագրելու փորձի և բանիմացության սկզբունքների վրա հիմնված բարձր որակավորում ունեցող կադրերի, ինչպես նաև այդ նպատակով ապահովել համապատասխան ուսուցման հնարավորություններ, վարձատրություն և ծառայողական առաջխաղացում (հոդված 6, կետ 2),

- երաշխավորել, որ տեղական մարմիններում ընտրված անձանց կարգավիճակը թույլ տա ստանալու իրենց լիազորությունների իրականացման ժամանակ արվող ծախսերին համապատասխան դրամական փոխհատուցում, ինչպես նաև, անհրաժեշտության դեպքում, փոխհատուցում՝ չստացված վաստակի դիմաց կամ վճարում՝ կատարված աշխատանքի դիմաց, և համապատասխան սոցիալական պաշտպանություն (հոդված 7, կետ 2),

- երաշխավորել, որ տեղական ինքնակառավարման մարմիններն իրավունք ունենան օրենքով սահմանված պայմաններում համագործակցել այլ պետությունների համանման մարմինների հետ (հոդված 10, կետ 3):

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին և չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 և 64-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց** .

1. 1985 թվականի հոկտեմբերի 15-ին Ստրասբուրգում ստորագրված՝ Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի (կից հայտարարությամբ) 5-րդ, 6-րդ հոդվածներում, 7-րդ հոդվածի 2-րդ և 10-րդ հոդվածի 3-րդ կետերում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

29 սեպտեմբերի 2015 թվականի  
ՄԴՈ-1230